ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 29-ից 30-ը Մոսկվա կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Կարեն Թամազյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2017 թվականի հունիսի 29-ից 30-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Երկկողմ նախաձեռնությամբ

5. **Գործուղման նպատակը՝**

- Մասնակցություն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության բարձրաստիճան ներկայացուցիչների միջև հանդիպումներին,
- Երկկողմ համագործակցությանն առնչվող թվով երեք փաստաթղթերի ստորագրում:

6. **Քննարկված թեմաները՝**

Հունիսի 30-ին ՀՀ ֆինանսների նախարարության պատվիրակությունը՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյանի գլխավորությամբ Մոսկվայում քննարկումներ է ունեցել Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարի տեղակալ Սերգեյ Ստորչակի և նախարարության այլ ներկայացուցիչների հետ: ՀՀ պատվիրակության կազմում հանդիպումներին մասնակցել է նաև ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական Արմեն Գևորգյանը:

Երկկողմ հանդիպումներում քննարկվել են համագործակցության ներկա օրակարգին առնչվող հարցեր, այդ թվում՝ Հայաստանի Եվրասիական տնտեսական միության անդամակցության «Ճանապարհային քարտեզի» շրջանակներում իրականացվող միջոցառումների ընթացքը: Անդրադարձ է եղել նաև միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի ստեղծման հեռանկարներին, ինչպես նաև հանրային ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության տեխնոլոգիական և տեխնիկական վերազինման ծրագրի մեկնարկին վերաբերող հարցերին:

Այցի շրջանակներում երկու երկրների գերատեսչությունների միջև ստորագրվել են թվով երեք փաստաթուղթ.

««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» 2015 թվականի մայիսի 21-ի համաձայնագրում (Միջկառավարական համաձայնագիր) փոփոխություններ կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության միջև Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը անհատույց ֆինանսական օգնություն տրամադրելու մասին» 2015 թվականի հուլիսի 3-ի համաձայնագրում (Միջգերատեսչական համաձայնագիր) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունները: Վերոնշյալ համաձայնագրերում փոփոխությունների նպատակն է Մաքսային Միության և Միասնական տնտեսական տարածքին միանալու «Ճանապարհային քարտեզով» նախատեսված ուղղություններով միջոցառումների պատշաճ իրականացումը, Միջգերատեսչական համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգումը, ինչպես նաև Միջգերատեսչական համաձայնագրի մնացորդային գումարի ծախսման ուղղություններում վերաբաշխումների կատարումը:

Վերոնշյալից բացի ստորագրվել է նաև համաձայնագիր՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը անհատույց ֆինանսական աջակցություն

ցուցաբերելու վերաբերյալ՝ միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի ստեղծման նախագծի համաֆինանսավորման շրջանակներում: Ըստ համաձայնագրի՝ 2017-2021 թթ. ՌԴ-ի կողմից ՀՀ-ին նախատեսվում է ցուցաբերել 8.2 մլն. ԱՄՆ դոլար գումարի չափով անհատույց դրամական միջոցներ՝ ՀՀ-ում Կառավարության ֆինանսական կառավարման միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ստեղծման և ներդրման աշխատանքներին աջակցելու նպատակով: ԿՖԿՏՀ-ի նպատակն է պետական հատվածի բոլոր մակարդակներում բարելավել ֆինանսական պլանավորման և կառավարման գործընթացները՝ տեղեկատվության և հաշվետվությունների ժամանակին գրանցման և ներկայացման միջոցով:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը

03.07.2017թ.